Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166 Ն որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ի

# ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սիրելի հաճախորդ, տեղեկացնում ենք, որ Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես դատական կարգով, այնպես էլ Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Դատարան դիմելու դեպքում Ձեր և «Փրայմ Ինշուրընս Բրոքերս» ՍՊԸ-ի միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:

Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու դեպքում Ձեր և «Փրայմ Ինշուրընս Բրոքերս» ՍՊԸ-ի միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն անվճար են:

Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք «Փրայմ Ինշուրընս Բրոքերս» ՍՊԸ-ին: «Փրայմ Ինշուրընս Բրոքերս» ՍՊԸ-ն պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: «Փրայմ Ինշուրընս Բրոքերս» ՍՊԸ-ի պատասխանը ստանալուց հետո Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե՝

1. Բողոք ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր և Դուք չեք ստացել «Փրայմ Ինշուրընս Բրոքերս» ՍՊԸ-ի պատասխանը, կամ
2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում, կամ
3. Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը), կամ
4. «Փրայմ Ինշուրընս Բրոքերս» ՍՊԸ-ից պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս, կամ
5. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել 2008թ. օգոստոսի 2-ից առաջ:

Զգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:

Ֆինանսական համակարգի
հաշտարարի գրասենյակ

Հաշտարար՝ Փիրուզ Սարգսյան
Հասցե՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1,
«Էրեբունի պլազա» բիզնես կենտրոն 4-րդ հարկ, 411 սենյակ
Հեռ.՝ (010) 582 – 321, 582 - 322
Էլ. հասցե՝ info@fsm.am
Ֆաքս՝ (010) 582 - 421
կայք՝ www.fsm.am

* Սիրելի՛ հաճախորդ, /ընկերության անվանումը/ հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից: Դա նշանակում է, որ /ընկերության անվանումը/ համաձայնել է դատական կարգով չվիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից /ընկերության անվանումը/ դեմ կայացված որոշումները:

Դուք կարող եք նաև բողոքներով դիմել Կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և «Փրայմ Ինշուրընս Բրոքերս» ՍՊԸ-ի միջև վեճերը, սակայն կարող է «Փրայմ Ինշուրընս Բրոքերս» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ «Փրայմ Ինշուրընս Բրոքերս» ՍՊԸ-ն խախտել է օրենքի պահանջները:

ՀՀ Կենտրոնական Բանկ

Հասցե՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6
Հեռ.՝ (010) 592 - 697
Էլ. հասցե՝ chairman@cba.am
Ֆաքս՝ (010) 565-496
կայք՝ www.cba.am

Հարգելի հաճախորդ, հայտնում ենք, որ եթե Ձեր և «Փրայմ Ինշուրընս Բրոքերս» ՍՊԸ-ի միջև կնքվել է արբիտրաժային համաձայնություն, դա նշանակում է, որ «Փրայմ Ինշուրընս Բրոքերս» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրբունալի կողմից: Դուք զրկվում եք «Փրայմ Ինշուրընս Բրոքերս» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի վճիռները, որպես կանոն, դատարանի կողմից վերանայման ենթակա չեն: